ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐՍԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ Վարսեր համայնք
հեռ. 261/2-74-63
Էլ. փոստ varsergegarquniq1828@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ N 3 - Ն

10 - ը հունվարի 2018թ. թիվ 1 նիստի

3. (3) - Վարսեր համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների 2018 թ. դրույքաչափերի հաստատման մասին>>:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի դրույթներով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով Վարսեր համայնքի ավագանին.

## Ո Ր Ո Շ Ու Մ Է՝

Հաստատել Վարսեր համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի ) թույլտվության համար.

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա) մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ

բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

բա) 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ

բբ) 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ

բգ) 1001-ից մինչև 3000 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ:

բդ) 3001-ից և ավելի քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ:

Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

գ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 ( հազար հինգ հարյուր) դրամ

դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի, շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ ՀՀ

օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 ( հազար հինգ հարյուր) դրամ:

բ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառուցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա). ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 (հինգ հազար ) դրամ:
- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500(յոթ հազար հինգ հարյուր)դրամ:
- 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000(տաս հազար)դրամ:
- 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500(տասներկու հազար հինգ հարյուր) դրամ:
- 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22500 ( քսաներկու հազար հինգ հարյուր) դրամ:
- 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50500( հիսուն հազար հինգ հարյուր) դրամ:

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 (հինգ հազար) դրամ:
- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500( վեց հազար հինգ հարյուր) դրամ:
- 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000( տաս հազար) դրամ:
- 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500 ( տասերկու հազար հինգ հարյուր)դրամ:
- 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22500(քսաներկու հազար հինգ հարյուր)դրամ:
- 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ( հիսուն հազար) դրամ:

5. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայության մասին>> ՀՀ օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ 350 (երեք հարյուր հիսուն) դրամ՝ 1 քառ. մետրի համար:

6. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների, խաղատների և բաղնիքների (սաունաների) ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար,օրացուցային տարվա համար.

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000( քսանհինգ հազար) դրամ:
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000(հիսուն հազար) դրամ
գ) խաղատների համար՝ 250 000 ( երկու հարյուր հիսուն հազար):
դ) Շահումով խաղերի համար՝ 125 000 ( հարյուր քսանհինգ հազար) դրամ:
ե) Վիճակախաղերի կազմակերպման համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ:

7. Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է

ա) հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր)դրամ:
դրամ:
- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ:
- 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12500(տասներկու հազար հինգ հարյուր)դրամ:
- 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 17500(տասնյոթ հազար հինգ հարյուր) դրամ:
- 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000(քսանհինգ հազար) դրամ:
- 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000(քսանհինգ հազար)դրամ:

բ) Ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 500(հինգ հարյուր) դրամ:
- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000( մեկ հազար)դրամ:
- 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝2000 (երկու հազար) դրամ:
- 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 (չորս հազար)դրամ:
- 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500(յոթ հազար հինգ հարյուր)դրամ:
- 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12500(տասներկու հազար հինգ հարյուր)դրամ:

8. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ:

9. Ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քմ-ի համար՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ՝ 1000 դրամ:

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 դրամ:

գ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու համար՝ սահմանված տուրքի 25 տոկոսի չափով՝190:

10. Համայնքը վարչական տարածքում մարդատար - տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 (հինգ հազար ) դրամ:

11. Շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար տեղական տուրքը սահմանել 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ:

12. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդի մասնակցության համար տեղական տուրքը սահմանել 500 (հինգ հարյուր) դրամ:

13. Այլ ծառայություններ կատարելու (մրցույթի հաղթողի ճարտարապետահատակագծային աշխատանքները ավարտին հասցնելու) համար տեղական տուրքը սահմանել 5000 (հինգ հազար) դրամ:

14. Համաձայն <<Տեղական տուրքերի և վճարումների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի սահմանված վճարների համար սահմանել 0,5 գործակիցը:
15. Աղբահանության համար սահմանել 1 շնչի հաշվով 50 դրամ ամսեկան, ընդամենը 1500 x 50 x 12= 900000 դրամ:

Վարսեր համայնքի ավագանու անդամներ

կողմ (7 ) դեմ (0 ) ձեռնպահ (0)

Վ. Արզումանյան

Ե. Սեդրակյան

Ե. Պողոսյան

Գ.Մարգարյան

Կ.Նավասարդյան

Լ.Մարտիրոսյան

[illegible]

Վարսեր համայնքի ղեկավար՝ Հ.Սեդրակյան

գ. Վարսեր
10.01.2018 թ